



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐԹՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՅՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԵՉԻԿՏԻՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 16 ՅՈՒԼԻՍ 1911

ԹԻԻ 27

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ եկեղեցւոյ Հայրապետի ընտրութեան եղանակը ՄԱՐԿՈՍ ԵՄԹՈՆԵԱՆ
Դժբաղքը (քերթուած) ԳՊՐԵՎԱՆՔՅԻ
Հոգեպաշտութիւն եւ նիւթապաշտութիւն դէմ դիմաց ԳՐ. ԷՕԼՄԷՋԵԱՆ
ՏԽՐՈՒՆԻ. — Կարապետ ԷՖ. Խորասանճեան ԲԱԲԵՆ ԵՊԻՍԿ.
ՅՈՒԼԻՍ ԵՒ ՊԱՄԲԻԿԻՍ. — Առաջին Գրիստոնեա- ԼԵՈՆ ԹՈՒԱԹՈՅ
ներու ժամանակուան պատմութիւն (Շար.)
ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՆՔԸ. — Կիլիկիա՝ Հոգեւորապետ
լքուած. — Կաթողիկոսական ընտրութիւն. — Ահաւոր
հրդեհներու շարք մը, եւ ուրիշ Ազգ. լուրեր:

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
դիմել առ Զարմայր Բանանայ Կեզիկտեան, Կ. Պոլիս, Պեշիկթաշ, Հայոց եկեղեցի:

بشمکطاش ارمی کایسانده «داجار» غزتهی مدیری پاپاس زارمیر افندی
Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

“ՏԱՃԱՐ”

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐ ԿԱՆԻՒԿ ԵՆ
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ’ԸՆԴՈՒՆՈՒՄԵՆ ԴԻՒՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐԻՆ

Պայման է համապատասխան	40 դրու
Արժանահամար համար	» 10 ծրագր
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օղար
Ձեռքէ կը ծախուի պարկը	40 փարա

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
ԱՂԵԲՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաֆթանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Դարեգին Բհնյ. Պողար-
եան
ԱՅԻՕՆ ԳՍՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնէլեան
ԲԱՐԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻՍ. — Առաջնորդ Տ Բարգէն Եպս.
Կիւլէսէրեան
ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան
ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Մ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐԶՆԿԱ. — Տ. Մեսրոպ Բհնյ. Թորոսեան
ԶՄԻՒՆԻՍ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Դալուստ Բհնյ. Տ.
Դալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.
Ասատէթեան
ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թորապեան
ԿԻՒԼԷԻԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Բհնյ.
Նշանեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպիեան
Շ. ԴԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տասեան
ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Բէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ. ՊԱԼԸԲԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մաղլըմեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.
Եպիսկ. Կէօմրիւքեան
ՌՈՒՍՃՈՒՐ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Դէորդ Մ.
Վրդ. Ասլանեան
ՍԱՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Մ. Վ.
Օտապաշեան
ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ Օտապաշեան.
ՍԷԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բհնյ. Տրէդ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Դէորդ Բհնյ. Թէրզեան.
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառժա-
պետ Բհնյ. Բիպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պոսկ Վրդ.
ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բհնյ. Դերձակեան
ՖՐԷԶՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐԹՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 16 ՅՈՒԼԻՍ 1911

ԹԻԻ 27

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Եթէ չըլլային աւելի հրատապ խնդիրներ որ գրեթէ մեր բոլոր ուշադրութիւնը գրաւած են, գլխաւորապէս գաւառներէն եկած անտապահովութեան, հարստահարութեան, թշուառութեան լուրերը, պաշտօնական եւ անպաշտօն կերպով գործուած անարդարութեան եւ ապօրինութեան դէմ գտնադատի եւ բողոքի աղաղակները, ինչպէս եւ Պատրիարքարանի առանձնաշնորհմանց դէմ եղած ոտնձգութեանց ու եկեղեցապատկան կամ վանքապատկան կալուածոց գրաւման փորձերու եւ մանաւանդ հողային խնդրոյն ցարդանլոյծ միալուսն առթիւ բարձրացող դժգոհութեան ու յուսաբեկութեան արձագանգները եւն. եւն. որոնք կը զրազեցնեն աւելի օր մամուլը եւ հասարակութիւնը, անշուշտ շատ տեղ տրուած պիտի ըլլար այժմ առաջիկայ Հայրապետական ընտրութեան գործին, նկատելով զայն իբր օրուան խնդիր, ինչպէս որ արգարեւ կ'արժէ նոյնչափ շահագրգռական ըլլալ արեւմտեան Հայոցս մէջ, ինչպէս է իրաւամբ մեր արեւելեան աղաւթիկներուն մէջ. որոնց նաեւ Պատրիարքն է ընդհանրական կաթողիկոսը:

Այլ որչափ որ առդին աւելի անմիջական հարցեր գրաւած ըլլան մեր բոլոր ուշադրութիւնը, անհրաժեշտ է սակայն անտես չընել նաեւ մեր Եկեղեցւոյ գերագոյն Պետին առաջիկայ ընտրութեան խնդիրը, որուն արդէն հազիւ հինգ ամիս միջոց մնաց, եւ նկատելով մեր արեւելեան դանդաղութիւնը, ժողովներէ խնդիր մը լուծել հանելու ձեւակերպական դժուարութիւնը, գուցէ ուշ իսկ մնացած ենք. հետեւաբար կ'արժէ այս մտքն ալ քիչ մը ուշադրութիւն եւ հոգածութիւն նուիրել:

Այս աեսութեամբ ահա ի դէպ համարեցի խօսիլ այսօր հայրապետական ընտրութեան եղանակի մասին, ուրիշ առթի թողլով խօսիլ ընտրելի անձին ոչ նուազ կարեւոր խնդրոյն վրայ, որ մանաւանդ առաջիկայ ընտրութեան պարագային աւելի գործնական կարեւորութիւն ունի քան ընտրութեան եղանակը, ինչ որ առ այժմ տեսականօրէն միայն քննելի հարց մըն է:

Բայց որովհետեւ աշխարհի վրայ չկայ Եկեղեցի մը որ մերինին նմանի, ոչ ալ Հայրապետութիւն մը՝ որ մերինին պէտ ընտրութեան եղանակ ունենայ, նոյն իսկ այդ եղանակին տեսականօրէն ունեցած արժէքն ու հանգամանքը մեծ կարեւոր-

բութիւն ունենալով՝ առաջին պատիւը պէտք է վայելէ ի յայտ դալու, լուսաբանուելու եւ գնահատուելու. որովհետեւ յայտնի է թէ ուղիղ քանոնէն է որ ուղիղ գիծ կ'ելլէ եւ ուղիղ օրէնքէն է որ ուղիղ վճիռ առաջ կուգայ, բաւական է որ գործածողները ուղիղ ու անկեղծ ոգւով զանոնք կիրարկեն:

Արդ մեր Եկեղեցւոյ աշխարհի միւս բոլոր Եկեղեցիներու մէջ ունեցած առանձնայատուկ գիրքին պէս առանձնայատուկ ըլլալով անոր գերազոյն Պետին ալ ընտրութեան եղանակը, է միեւնոյն ժամանակ ամենէն ընդունելին, անսուղտանելին եւ բառին իսկական իմաստով ժողովրդապետականը, միայն երկու բացառութեամբ. առաջին՝ երկու զանգիւղայի դրութիւնը որ նոյն իսկ ընտրական եղանակին էութեան հետ կապ ունի, երկրորդ՝ Թուրքիոյ եւ Ռուսիոյ Հայ թեմերէն ոմանց բաշխման ու արդի իրականութեան անհամեմատական վիճակը, որ օրէնքին գործադրութեան միայն կը վերաբերի եւ ոչ հիման կամ ոգւոյն: Առաջինը մեր ազգի քաղաքական վիճակի արդիւնքն է եւ փոխելը մեր ձեռքը չէ. երկրորդը վիճակագրական սրբագրութեան մը միայն կը կարօտի, ինչ որ մեր կամքէն ու կարողութենէն անկախ պարագայ մը չէ, բաւական է զայն կատարելու համար պահանջուած օրինական ձեւակերպութիւնները կատարել տալ սահմանազուլիւն թէ՛ այս եւ թէ՛ այն կողմը:

Այդ երկու բացառութենէն զուրս, հիանալի է, ինչպէս ըսինք, մեր Կաթողիկոսի ընտրութեան եղանակը ըստ Պալաթներայի. զի ի՞նչ աւելի գեղեցիկ դրութիւն կրնայ ըլլալ քան այն՝ զոր ունինք եւ որուն համեմատ Հայ Եկեղեցւոյ բոլոր թեմերէն մէկ մէկ կրօնական եւ աշխարհական պատգամաւորներ էջմիածնի Մայր Աթոռը կ'երթան եւ հոն կ'ընտրեն անոր Գահակալը՝ յայտնի քուէով:

Ու եթէ միայն Հոռոմի Պապերու ընտրութեան եղանակին հետ բաղդատենք մեր Հայրապետի ընտրութեան եղանակը, անվիճելի գերազանցութիւնը կը տեսնենք

անմիջապէս թէ մեր կողմն է. եւ զայս կ'ըսենք, ոչ թէ մերինը կուրաբար ու կողմնակալաբար նախամեծար դատելու ալամերժ զգացումով կամ նախասլաշարումով, այլ իրականութեան անժխտելի հակադրութեան ընծայած անուրանալի փաստովը: Վասն զի աւելի քան 300 միլիոն հետեւող ունեցող Կաթողիկ Եկեղեցւոյ գլուխ Պապը կ'ընտրուի մի միայն 72 եկեղեցականներէ (Կարդինալներէ) առանց աշխարհականներու որ եւ է մասնակցութեան ձայնի կամ իրաւունքի, (յաճախ 72 թիւն ալ ներկայ չըլլար) թէպէտ եւ այդ աշխարհականները կը կազմեն աշխարհի հզօրագոյն կայսրութիւններէ, թագաւորութիւններէ սւ հանրապետութիւններէ մէկ քանիները, ահազին ուժ ունեցող եւ վերին աստիճանի զարգացած ու լուսաւորուած ազգերով ու ժողովուրդներով: Իսկ մեր փոքրիկ Եկեղեցին ու ազգը կ'ընտրէ իր գերագոյն գլուխ Հայրապետը թէ՛ եկեղեցականներու եւ թէ՛ աշխարհականներու հաւասար մասնակցութեամբ կամ ձայնովը, ընտրուած յատկապէս իւրաքանչիւր անդամին այդ նպատակին համար որոշ հրահանգով, մինչդեռ 72 կարդինալները մէն մի Պապի ընտրութեան համար չէ որ կարդինալ կը կարգուին, այլ արդէն նախապէս եղած են՝ առանց Պապի մը ընտրութիւն կատարելու հարկ ծագած ըլլալու. թող որ կարդինալի անուանումն ալ լիկ Պապի եւ իր խորհրդական կրօնականներու կամքէն կախում ունի, այսինքն ժողովրդեան կամ գոնէ եկեղեցականներու կողմէ յատկապէս ընտրուած ըլլալու առաւելութիւնն ալ չունի:

Մեր Կաթողիկոսներու եւ Հոռոմի Պապերու ընտրական եղանակներու այս հակադրութիւնն ինքնին բաւական է մերինին գերազանցութիւնը ցոյցնելու, եւ վճռելու՝ հետեւաբար՝ թէ Պալաթներոյ ընտրական մասը բոլորով սրտիւ ընգրկած պէտք է պահենք եւ գործադրենք ամբողջովին, զի կատարելապէս համաձայն է մեր Եկեղեցւոյ ժողովրդական հնաւանդ ոգիին ու սովորութեան, պատմական

անուրանալի ճշմարտութիւն ըլլալով թէ մեր Հայրապետները միշտ այդպէս ընտրուած են, այսինքն եկեղեցականներու աշխարհականներու ձայնով, ի բաց առեալ ինչ ինչ խառնակ կամ անխիտանական պարսկաները. բայց բացառութիւնը օրէնք չէ բնաւ եւ շատ հազուադէպ եղած է:

Ուստի բոլորովին սխալ է այն մեկնութիւնը որ Ազգ. Սահմանադրութեան հաստատութեան առջի տարիները արուեստաւ անոր Երկր յօդուածին, որուն համեմատ կարծեցին թէ Կ. Պոլսոյ Ազգ. Ընդհ. Ժողովը իրաւունք ունի տաճկահայ բոլոր թեմերու կողմէն լիազօր փոխանորդութեամբ երկու պատգամաւոր ընտրելու զրկել էջմիածին, տալով անոր 90 ձայնի իրաւասութիւն՝ իբրեւ ներկայացուցիչ Թրքահայոց 45 թեմերուն, ինչպէս շարժեցան 1866ին Գէորգ Դ. ընտրութեան ատենը, եւ 1884ին Ներսէս Վարժապետեանի (որ հրաժարեցաւ), եւ 1885ին Մակարի ընտրութեան ատիւ:

Բարեբաղդաբար Սահմանադրութեան այդ յօդուածին բռնադրօսիկ ու սխալ մեկնութիւն եւ գործադրութիւնը մէկգի թողուեցաւ 1892ին, եւ յաւերժայեանակ իրիմեան Հայրիկը Պալատենիոյ համաձայն իսկապէս ժողովրդական ընտրութեամբ եւ միաձայնութեամբ բարձրացաւ Հայրապետական դահլ:

Նոյն դրութիւնը անգամ մը նուիրագործուելով՝ ըստ այնմ ընտրուեցաւ 1908ին նաեւ հանգուցեալ Իգորլեան Կաթողիկոսը:

Թէպէտ եւ գիտենք որ այժմ ոչ ոք մտքէն կ'անցնէ վերադառնալ Գէորգ Դ. եւ Մակարի ընտրութեան ատենի սխալ դրութեանը, բայց եւ այնպէս աւելորդ չհամարեցինք մեր Եկեղեցւոյ Պետին բնութեան եղանակին դերազանցութիւնը ի վեր հանել, եւ ըսել թէ Սահմանադրութեան Երկր յօդուածը որ կը արամադրէ թէ Ազգ. Ժողովը կը մասնակցի ընդհանրական կաթողիկոսի ընտրութեանը, կը նշանակէ թէ առ առաւելն իրաւունք ունի ի դիմաց Կ. Պոլսոյ թեմին երկու պատ-

գամաւոր միայն ընտրել. թող որ դեռ այդ ալ ինչորական է, զի Կ. Պոլսոյ թեմի պատգամաւորները պէտք է ընտրուին միայն ու միայն Կ. Պոլսոյ ներկայացուցիչներու ձայնով ու քուէովը, ինչպէս ամէն գաւառական Ընդհ. Ժողով կ'ընտրէ իր պատգամաւորը, քանի որ նոյն թեմին միայն երեսփոխանական Ժողովն է: Իսկ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովը կը ներկայացնէ բովանդակ Տաճկահայ ժողովուրդը, հեռեւաբար իր ընտրելիք պատգամաւորները կրնան համոզուիլ իրենց ատեն Թուրքիոյ բովանդակ Հայոց պատգամաւոր, մինչդեռ արդէն ամէն թեմէ իր պատգամաւորը կ'ընտրէ կամ ընտրելու իրաւունք ունի:

Ըստ այսմ, Սահմ. Երկր յօդուածը մասնաւոր մեկնութեան կը կարօտի բուն Կ. Պոլսէն կարգուելիք պատգամաւորներու ընտրութեան եղանակի մասին, եւ ուրիշ բան չի կրնար ըլլալ այդ մեկնութիւնը, բայց թէ այս որ բուն Պոլսոյ թաղերէն ընտրուած երեսփոխանները միայն պէտք է քուէարկին կաթողիկոսական երկու պատուիրակներու ընտրութիւնը, եւ ոչ թէ Ընդհ. Ժողովն իր ամբողջ կազմովը:

ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ

ԴԺԲԱՂԴԸ



տուերի պէս կը խուսին
Ծաղիկ կեանքեր մեկուսի.
Իսկ օր մը այսպէս ըսին,
Անկեղծ հոգիներն յոյսի:

«Թէ Թշուառին սեւաստուեր
Կեանքն հողէ ժայռ մը կ'ըլլայ,
Երբ իր ցաւոտ սիրտը լայ,
Հո'ս լացողը չեն սիրեր:

«Թէ հոգեթով նուագներ
Ծիածանին իբրեւ խունկ,
Ժպիտ ըլլան Թէ արցունք,
Հո'ս երգողը չ'են սիրեր:

«Տե՛ղ աշնան չոր տերեւներ
Ձեռքերու մէջ փշրուած,
Դրբիդ իղձն է արցունք լաց,
Հոս քերթողը չեն սիրեր:»

Թէ զիս պատեն բիւր վարդեր
Պլպուլն երգէ ինծի հետ.
Լուսնակն օճէ զիս յաւետ,
Երբ դժբաղդ եմ, չեն սիրեր:

ԴՊՐԵՎԱՆՔՑԻ

ՀՈԳԻՒՆ ԳՈՅՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՈԳԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԻԹԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Դ Է Մ Դ Ի Մ Ա Յ (1)

Ա..

Բնականական Հոգեբանութիւնը.— Հոգին եւ նիւթը.— Մարդուն մէջ իմացականութիւնը՝ զգայնութիւնը եւ կամքը կը պահանջեն մէկ միութիւն, մէկ ինքնակամութիւն.— Նիւթականին ազդեցութիւնը բարոյականին վրայ, եւ փոխադարձաբար.— Ֆլուրանսի փորձը.— Ճագարին ոսկորներն անգամ կը ներկուին՝ տորոն ուտելով.— «Կրնայ ըլլալ որ կ'երագեմ»:

Մանելէ առաջ մարդոց խորհող դասակարգը այնքան շահագրգռող խնդրոյն՝ նիւթէն անջատաբար հոգիի գոյութեան եւ անոր անմահութեան հարցին մէջ, երկու բառով փութամ ըսել թէ բնականական հոգեբանութիւնը, որու միջոցաւ պիտի ջանանք լուծել զայն, կոչուած է փորձառական հոգեբանութիւն, վասն զի անիկա չարհամարհեր փորձերը: Ան նկատուած է զրական գիտութիւն, իրողութիւններու գիտութիւն որ իրեն միթոս ունի զիտողութիւնն ու մականութիւնը (2), այսինքն ներքին գիտողութիւնը, մեր անձին մէջ կատարուած գիտողութիւնը, փոխանակ զգայարաններու միջոցաւ կատարուած (արտաքին) գիտողութեան: Ահա՛ թէ

(1) Նիւթապաշտ դարուն մէջ ուր կ'ապրինք, ամէն օր կը լսուին առարկութիւններ հոգիի անմահութեան դէմ, առարկութիւններ որոնց հետաքրքրութեամբ ականջ կը զնեն մեր երիտասարդները, առանց լսելու տրուած պատասխանները: Այդ կարգի առարկութեանց ամէնէն զօրաւորներուն խղճամիտ քննութիւնն է ներկայ յօդածներու շարքը՝ զոր ֆրանսերէնէ յատկապէս Յաֆաբի համար ծարգմանելով զրկած է Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանի աւագ ուսուցիչ Դր. Է. Ֆ. Էօլմէզեան. մեր խորհող եւ ուսանելու հետամուտ երիտասարդութեան լուրջ ուշադրութեան կը ներկայացնենք:

Ծ.— Խմբ.

(2) Տրամաբանական դրութիւն, որ ընդհանուրէն մասնաւոր հետեւութիւններ կը հանէ:

Ի՞նչ բանի մէջ է որ հոգեբանութիւնը կը զանազանի բնագիտութեան (physique) Ասկէ դատ, անիկա միեւնոյն սեռէ եւ միեւնոյն ստորոգելիքներն ունեցող դրական գիտութիւն մըն է որ իրողութիւնները կը հաստատէ, զանոնք կը բաղդատէ եւ լուազոյն կերպով կը բացատրէ:

Կայ հարցերու ուրիշ շարք մը, որոնց կ'առաջնորդէ հոգեբանութիւնը, հարցեր՝ զորս փորձը չի կրնար լուծել եւ որոնք իրողութիւններու կարգէն կը շեղին, եւ ասոր համար զանոնք կ'անուանեն բնազանցական: Եւ այդ հարցերը գերազանցօրէն շահագրգռական են.— Ի՞նչ է խորհող էակին իսկութիւնը, ներքին բնութիւնը, ի՞նչ է իր իսկ մէջը գտնուած այն գիտակից նախատարրը որուն կը պատկանին ինքնածիւն գործունէութիւնը, զգայնականութիւնը եւ մտածողութիւնը: Արդեօք անիկա առանձին, մարմնէն անջատ նիւթ մըն է, հոգի՞ մը, կամ թէ այս կարողութիւններն ու գործողութիւնները միթէ գործարանաւորութեան աւելի փափուկ, աւելի ներքին եւ մանաւանդ արեւի ազնիւ կարողութիւնները չէն, միթէ մարմնէն է որ կը կամի, կը զգայ ու կը խորհի, միթէ անոնք գործարանական կեանքի արտայայտութիւններն են սոսկ եւ ո՛չ ուրիշ բան, կամ թէ այս մարմինն մէջ կայ իշխող, վարող, բնութեամբ անսխիւթական եւ անկորնչական նախատարր մը, որ յառաջ բերէ հոգեբանական կարողութիւններ ու երեւոյթներ:

Այս կերպով երկու վարդապետութիւններ զէմ գիմաց կ'ելլեն, նիւթապաշտութիւնը՝ որ գիտակցութեան յուր իրողութիւնները առանց բացատրութեան կը վերագրէ մարմնին եւ գործարաններու պաշտօններուն, եւ երկրորդ հոգեպաշտութիւնը՝ որ անոնց նախատարրը հոգիին մէջ կը գտնէ:

Այս երկու վարդապետութիւնները՝ նիւթապաշտութիւն եւ հոգեպաշտութիւն, ընդհանուր կերպով կը բնորոշուին այսպէս: Նիւթապաշտութիւնը՝ ըստ Ռալֆե-սօնի (3) բացատրութեան՝ այն վարդապետ-

(3) Ժամանակակից իմաստասէր ֆրանսացի, ընդհանուր քննիչ բարձրագոյն ուսուցման եւ հեղինակ շատ մը իմաստասիրական գրութեան:

տութիւնն է որ ամէն բանի մէջ գերա-
գոյնը կը բացատրէ ստորնագոյնով, մինչ-
դեռ հոգեպաշտութիւնը՝ ստորնագոյնը կը
կը բացատրէ գերագոյնով, այնպէս որ
մարդ կրնայ տակաւին նիւթապաշտ ըլ-
լալ մեր հոս յայտնած հարցերէն վատ, ու-
րիշ շատ մը հարցերու մասին եւս Օրի-
նակի համար, նիւթապաշտական ըմբռ-
նում մը՝ աշխարհի մէջ կը տեսնէ միայն
նիւթը եւ անոր ուժերը, որոնք կը վարեն
նիւթական կոյր եւ ճակատագրական օ-
րէնքներով, առանց հոգեկան նախատարբի
մը, առանց վարիչ գաղափարի մը՝ որ կը
բացատրէ տիեզերքին կարգը՝ պէտքին
կամ զիպուածին միջոցաւ, մեքենական
ուժերու մի միակ եղանակաւ։ Ընդհակա-
ռակն՝ տիեզերքի մասին հոգեպաշտական
ըմբռնումը այն է որ աշխարհի մէջ ամէն
տեղ կը նշմարէ մտքին ու հոգիին հետ-
քերը, կարգն ու գեղեցկութիւնը, եւ կը
քանչանայ անոնց վրայ, որ կը տեսնէ
բոլոր նիւթական օրէնքները՝ վարիչ գա-
ղափարներու, զիտաւորութիւններու եւ
վախճաններու ստորադասուած, եւ հետե-
ւաբար բարի ու նախախնամական Միտք
մը կը տեսնէ հոն, որպէս աշխարհի ճշմա-
րիտ բնապատճառը։

Կարելի է տեսնել նոյնպէս շատ մը
մարդիկ որոնք կրնան բլլալ նիւթապաշտ
կամ հոգեպաշտ՝ արուեստի եւ ամէն բանի
մէջ, սակայն մենք պիտի սահմանափակ-
ուինք շատ որոշ եւ շատ ճշգրիտ վիճա-
բանութեան մը մէջ, որ կը գտնուի նիւ-
թապաշտութեան եւ հոգեբանական հո-
գեպաշտութեան միջեւ, այսինքն՝ մարդուն
մէջ նիւթը եւ գործարանները կան միայն,
թէ անոր մէջ գոյութիւն ունի էապէս
բարոյական նախատարբ մը՝ հոգին։

Նիւթականին՝ բարոյականին հետ ու-
նեցած յարաբերութիւնները գիտենք ար-
դէն, ուրիշ կ'ընդհանրուի նիւթապաշ-
տական բնաբանը։

Մէջ բերենք զայն իր ամէնէն զօրաւոր
կողմերն առնելով, եւ սկսինք քննադատել
զայն կէտ առ կէտ։ Առ այս պիտի մատ-
նանշենք կարգով այն ամէն փաստերը
զորս նիւթապաշտները մէջ կը բերեն

խորհող եւ նիւթական հիւլէներէ որոշ
նախատարբի մը գոյութեանը դէմ, եւ ըստ
չափու պիտի ջրենք այդ փաստերը։

Հոգեպաշտութիւնը հաստատել եւ
զայն ամէն առարկութիւններու դէմ
պաշտպանել դժուարին աշխատութիւն
մըն է, վասնզի անոր բոլոր շօշափած
կէտերը վերայական հողի վրայ կը զըտ-
նուին. սակայն կը կարծենք թէ ոչինչ
այնքան դիւրին է որքան հերքել նիւթա-
պաշտութիւնը իր սովորաբար ներկայա-
ցած վիճակին մէջ։

Նիւթապաշտներուն փաստերը երեք
խումբի կը բաժնուին.—

1. Նիւթին՝ տակաւին քիչ ճանչցուած
բնութիւնէն եւ նուազագոյն շարժումի (4)
սկզբունքէն առնուած փաստեր։

2. Նիւթականին՝ բարոյականին վրայ
ըրած ազդեցութենէն առնուած փաստեր։

3. Ուղեղին եւ մտքին իրարու հետ
ունեցած յարաբերութիւններէն առնուած
փաստեր։

Իւրաքանչիւր կէտի համար տրուած
պատասխանը պիտի հանենք նիւթապաշ-
տական փորձերու ցուցմունքներէն, եւ
իւրաքանչիւրէն հանուած մասնակի եզ-
րակացութեան մը պիտի յաջորդէ ընդհ.
եզրակացութիւնը, Առաջին.— Մտածումը
կ'ըսեն նիւթապաշտները, նիւթին մէկ յատ-
կութիւնն է, բացարձակապէս նման ելեկ-
տրականութեան եւ մագնիսականութեան։
Այո՛, դասաւորութեան տեսակ մը պա-
րագաներու տակ նիւթը կը խորհի, ինչ-
պէս կարգ մը պարագաներու տակ ելեկ-
տրականութիւն կը հանէ։ Ամէնէն ան-
կեղծ եւ ամէնէն պարկեշտ նիւթապաշտ-
ները կը խոստովանին թէ ասիկա տակա-
ւին ապացուցուած չէ, սակայն ո՛չ ալ
միշտ ճանչցուած ու ապացուցուած է թէ
նիւթը կ'արտադրէ ելեկտրական երեւոյթ-
ներ, այսուհանդերձ ոչ ինչ աւելի ստոյգ
է. անկարելի չէ ուրիմն թէ նիւթը կը
խորհի, թէ եւ մենք չկարողանանք հաս-

(4) Այսինքն բնութեան մէջ ամէն ինչ ծանր
ծանր կը կատարուի, որքան կարելի է քիչ ժամա-
նակ եւ քիչ ուժ սպառելով, ինչպէս կենդանիներու
և բոյսերու անումը։

կրնալ թէ ինչպէս: Մենք թէեւ չենք ճանչնար նիւթին բոլոր յատկութիւնները, սակայն ո՛րքան յառաջանայ մարդ անոր ուսումնասիրութեան մէջ, ա՛յնքան հրաշալիքներ կը գտնէ անոր մէջ: Թերեւս խորհելու եւ զգալու կարողութիւնն ալ պիտի գտնուի անոր մէջ, եւ այդ բարձր կարողութիւններն ունի իր մէջ այնքան ստուգապէս որ ունի նիւթական ստորնադոյն յատկութիւններ, հոգ չէ թէ անիկա ա՛յնքան թաքուի, ա՛յնքան տկար ըլլայ, եւ հաստատել այնքան դժուարին:

Արդտրեւ, կը յարեն անոնք, ի՞նչ պէտք կայ որ մարդուն մէջ ըլլան երկու նախատարրեր, մարմնաւոր եւ հոգեւոր: Տրամաբանական եւ բնազանցական հին առած մը կ'ըսէ թէ պէտք չէ շատցնել էականները առանց պատճառի, ոչ ալ մէջտեղ նետել բազմաթիւ նախատարրեր, երբ միայն մէկ հատը բաւական է: Ինչո՞ւ մարմինն իսկ չպիտի ըլլայ խորհող էակը, և ի՞նչ աւելի կը գոհանայ միտքիւնով քան թաղանթալեւորքաւ, եւ կասկածոտութիւնը՝ գոնէ հոս անօգուտ է:

Պատասխան. — Կ'ընդունինք թէ նիւթը ունի անտարակոյս մեղի անձանոթի շատ յատկութիւններ որոնք պիտի գտնուին ապագային մէջ. սակայն այն յատկութիւնները զորս չենք ճանչնար՝ չեն կրնար ընդդիմաբանել կամ հակառակ լի մեր ճանչցածներուն: Գիտենք ապահովապէս թէ նիւթը տարածական է, հետեւաբար էականապէս յաժմանելի է, թէ անիկա անզործ է, այսինքն անկարող ինքնածին շարժման, թէ կենդանի նիւթը, մասնաւորապէս, կը նորոգուի անդադար, եւ հետեւաբար չէ բնաւ միեւնոյնը որոշեալ մարմնի մը մէջ, տասը տարուան ժամանակամիջոցի մը պահուն: Ահա այս է զոր բնախօսները կենդանական փոխակերպութիւն (tourbillon vitale) կ'անուանեն: Սննդառութիւնը եւ շնչառութիւնը շարունակ մեր մարմնին մէջ կ'որդրեն նիւթեղէններ որոնք առաջին չ'այլին, եւ անջատողականութեան (désassimilation) գործողութեամբ մը մարմինը կը կորսնցնէ շարունակ իր անձին իսկ մասը կազմող նիւթեղէններ. ասիկա

հիւլէներու տեւական զեղոյթ (flux) մըն է որոնք կը մանեն ու կ'ելլեն:

Ֆլուերանսի (5) կողմէ ճագարներու վրայ եղած փորձերը կը հաստատեն մեր այս ըսածին ճշմարտութիւնը: Յիշեալ գիտունը անոնց անոնգին մէջ խառնելով տորոնի (Գրգրլ պոյա) արմատը, կըրցաւ զիտել այս նիւթին գունաւորող յատկութեան ազդեցութիւնը՝ ոսկրային հիւսուածքին վրայ, եւ այսպէս հետեւիլ ոսկրներու կազմութեան վիճակին: Դանի մը օր վերջը ոսկրները կը կարմրին դուրսէն, յետոյ այս կարմրի ներկումը կը ճամբորդէ դուրսէն դէպի ներս, մինչեւ ծուծը: Այս երեւոյթը քիչ մը ժամանակ վերջ բացարձակապէս կ'անհետի, եթէ անասունը ենթարկուած է իր սովորական կեանքի վիճակին:

Այսպէս, մեր մարմնին հաստատուն մասերն անդամ՝ ոսկր, եղունգ, մաղեր՝ բոլորն ալ տեւական փոփոխականութեան մէջ են, այսինքն՝ շարժումը հոն ալ ա՛յնքան շարունակական, ա՛յնքան անողոք է որքան փափուկ մասերուն մէջ. այնպէս որ չափահասի մը մարմինը թերեւս ա՛լ չ'ի պարունակեր փոքրիկ մասնիկ մը անդամ այն հիւլէներէն, որոնք զայն կազմած էին տասր տարի առաջ: Ահա այս է կենդանի նիւթին եզական ու իսկատիպ յատկանիշը (հոս հարցը կենդանի նիւթին վրայ է միայն, քանի որ անոր է որ կը վերագրուի միաբնի մարմնին): Արդ, նիւթին այս յատկանիշը բացարձակապէս անհաշտելի է մտքին, դիտակցութեան էական յատկանիշերուն հետ:

Գիտակից ու խորհող էակը, ինչ ալ ըլլայ, էականապէս չ'ի եւ անբաժանելի է, պարզ է եւ օժտուած ինքնածին գործունեութեամբ մը: Ենթակային այս ինքնականութիւնը ա՛յնքան հեռուն կ'երթայ որ նա կը զգայ կամ գոնէ ինքզինք կը ճանչնայ ազատ, մինչդեռ նիւթին անզործ ու ժկըր պէտքին նուիրուած են: Ասկէ զատ, խորհող նախատարրը կեանքի ամբողջ տե-

(5) Իմաստաւոր. Ֆլուերանսի (1794-1867), նշանաւոր են ոսկրներու, ջղային գրգռման, մարդկային երկարակեցութեան, կենդանիներու իմացականութեան եւ քաղցի եւայլն վրայ իր գրածները:

ւողութեան մէջ միեւնոյն կը մնայ, այսինքն ինքն իր անձին մէջ յարեւմտեան, անխորհրդ կը մնայ, հակառակ մարմինն միջոցաւ ենթարկուած փոփոխութիւններուն, եւ հակառակ այն յատկութեան զոր ունի կենդանի նիւթը տեւականօրէն վերանորոգուելու համար:

Եթէ կը յիշեմ յստակօրէն ինչ որ ըրած եմ տասնը հինգ տարի առաջ, եւ եթէ ապացուցուած է գիտնականօրէն թէ մարմինս չէ այն տասնը հինգ տարի առաջուան մարմինս, եւ ամբողջովին վերանորոգուած է այդ միջոցին, ապա՞նշտաբար այն տարրը որ կը յիշէ եւ կը խորհի իմ մէջս, որ զգացուած է եւ կը պահէ անոր յիշատակը, չի գտնուիր մարմինն մէջ: Մէկ խօսքով իմացականութիւնը, զգայնականութիւնը, կամքը՝ ունին մէկ միութիւն, մէկ նոյնութիւն, մէկ ինքնակամութիւն որոնք կը պակսին նոյն իսկ կենդանի նիւթին մէջ, որ՝ տարածական է եւ հետեւաբար բաժանելի, միշտ շարժուն եւ ինք իրմով անգործ:

Գալով նուագագոյն շարժումի սկզբունքին վրայ եղած կողմին, ան տղ կ'ապացուցանէ առաւել ի նպաստ հոգեպաշտներու բնաբանին քան նիւթապաշտներու: Եթէ ճշմարիտ է թէ մի միակ նախատարր բաւական է, թէ անօգուտ է երկու նախատարր ընդունիլ, ինչո՞ւ հոյին չպիտի ըլլայ այս միակ իրականութիւնը, որքան նիւթը: Մանաւանդ որ հոյին աւելի կրնար ըլլալ այդ եւ նիւթը չէր կըրնար ըլլալ: Վասն զի, խորհինք անգամ մը, ի՞նչ գիտենք մինք նիւթական առարկաներու մասին: Մենք դանտիք կ'ըմբռնենք միայն մեր գիտակցական հանգամանակներու միջոցաւ. անոնք մեզի համար գոյութիւն ունին՝ սոսկ մեր կողմէ ըմբռնուելով, մեր կողմէ խորհուելով, մենք կրնանք ի հարկին կասկածիլ իսկ անոնց մասնանշած տարրականներուն վրայ: «Իրնայ ըլլալ որ վ'երազեմ», կ'ըսէր Տէքարթ(6), «երբ կը կարծեմ տեսնել տունս, սեղանս, վասն զի ինձի կը պատահի շատ անգամ որ գանոնք երազիս մէջ տեսնեմ եւ խաբուած ըլլամ»: Տէքարթէն յետոյ Պէրքէյ (7) չի

վարանիր յայտարարելու թէ՛ «հոգին յանշափս ստոյգ եւ աւելի ուղղակի կերպով ծանօթ է. դիւրագոյն է՝ կ'ըսէ՝ ճանչնալ զայն քան նիւթը»:

Միայքը, գիտակցութիւնն է անա ծայրագոյն իրողութիւնը (fait ultime), անվերածելին, վասն զի ի՞նչ ջանք ալ ընեմ կասկածելու համար ամէն բանի մասին, ցորքան կը կասկածիմ՝ կը խորհիմ: Ապա ուրեմն եթէ մի միակ եւ եզական նախատարր մը կայ, այս նախատարրը հոգին է, անձն է, չի կրնար ան ըլլալ տարածական նիւթը որ չէ ինչ ըստ ինքեան, եթէ ոչ մեր հոգեոյն մէկ ըմբռնումը եւ որ կը փոխուի գիտակցական հանգամանակներու:

Թրգւ. Յրանս. ԳՐ. ԷՕԼՄԷԶԵԱՆ

(Շարունակելի)

ՊԱՊԸ Կ'ԻՒՐԱՑՆԷ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՈՎՈՐՈՅԹ ՄԸ

Բիւզանդիոնի մէջ «Արձան» ծածկանունով յօդուածագիր մը կը ծանուցանէ թէ Պիոս Ժ. Պապը՝ Հռոմի Եկեղեցւոյն մէջ սովորութիւն եղած կարգ մը հրամայեալ տօներ՝ կիրակիի կը փոխադրէ, որպէս զի հրամայեալ տօնի եւ գործէ դադրելու օրերը քիչնան. կը հրամայէ նոյնպէս որ եթէ մնացեալ ութ հրամայեալ տօներ, կամ իւրաքանչիւր քաղաքի պաշտպան սուրբի տեղական տօները պահքի հանդպին, նոյն օրերը պահքն ու ծովը դադրին, եւ ներկալ ըլլայ այդ օրերը օրինաւորապէս պահքն ու ծովը լուծել: Հոյ Եկեղեցւոյ կարգաւորութեանց հմուտ եղողներ գիտեն թէ Հայ-Եկեղեցւոյ ամենահին սովորոյթներ են ասոնք, զորս հիմա կ'որդեգրէ Հռոմի Պապը: Վերջին դարերու մէջ, գլխաւորապէս Ռուբինեաններէն ասպէն է սը Հայ-Եկեղեցւոյ մէջ մտեր է շարժումն մէջ հրամայեալ տօն կատարել, կամ տօնական օր մը պահքը չլուծել: Ու չադրաւ է որ մինչ ժամանակ մը Հայեր գովելի բան մը նկատեի են լատինական սովորութիւններ իւրացնել, հիմա լատիններն են որ օգտակար կը դատեն հայ սովորութիւններն ընդունել:

(6) Մեծագոյն իմաստասէր Ֆրանսացի (1596-1650):

(7) Եպիսկոպոս եւ իմաստասէր Իռլանտացի, (1684-1753)

ՏԻՆՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

Շանթահարեց զիս ԿԱՐԱՊԵՏԻ անսպասելի մահուան գոյժը:

Եւ ըսի. — «Ո՛վ Աստուած, թէ եւ կամքդ անհասանելի, թէ եւ խորհուրդներդ անթափանցելի, թէ եւ այս մեծաքանի բռնութեան մէջ հասաատուած օրէնքներդ անյեղլի, բայց միեւնոյն օրէնքներով գործող սա մեր խելքով չենք կրնար ըմբռնել, թէ ինչո՞ւ անգէպ ու անժամանակ կը կտրուին այսպիսի յուսալից կեանքերու թելերը: Ո՛րչափ արարածներ ունիս մարդ անուան տակ, որոնց վրայ անդադար կ'եղծուի աստուածային պատկերդ: Մահը անոնց այցելելու չէ՞ր, որոնք չեն գիտեր թէ ինչի՞ պէտք են եւ ինչո՞ւ կ'ապրին մարդկային ընկերութիւն ըսուած այս թշուառութեան մէջ: Եւ ի՞նչ կ'ուզէ եւ կը յուզէ Բանաստեղծի մահուան տեղոյն հրեշտակը Խորասանճեաններու տան մէջ: Դեռ քանի՞ օր եղաւ, որ մահուան հրէշը՝ Օննիկի պէս կեանքի հիւթալից նոճի մը արմատախիլ ըրաւ անկից՝ իր գարնանային բովանդակ առուդութեան եւ զեղեցկութեան մէջ: Եւ ԿԱՐԱՊԵՏԻՍԻ ալ . . . պէտք էր իրեն, այս պատուական երիտասարդը, այս կատարեալ Հայը, այս թանկագին հայրը, այո՛, այս անկեղծ մարդը, որուն այսպէս յանկարծական մահացումը շատերուն, շատերուն խորին, դառն եւ իրական վիշտ կը պատճառէ: Կսկի՛՞՞՞»:

Եւ ինձ համար ո՛րչափ շանթահարիչ է իր մահուան իրականութիւնը, ես որ շատ մօտէն ճանչցած եմ զինքը՝ իր սօսն մէջ, իր վաճառատան մէջ, իր սղդային դործունէութեան մէջ, իր բարեկամութեան մէջ:

Խորասանճեաններու նկարագրին արտայայտութիւնն էր Կարապիւր, պարկեշտ, բառին բոլոր իմաստով, եւ այս նկարագիրը՝ օր օր տո՛ւ Պէրպէրեան վարժարանի ամենէն խնամոտ գործունէութեան շրջանին: Խորասանճեաններու հարստութիւնը, զիրքը, երբէք յարմարութիւն եւ զիւրութիւն չէ ընծայած Կարապիւր եւ հոգը իր

եղբայրներուն եւ հօրեղբորորդիներուն, որ հարուստներուն համար ներելի համարուած ուղիներու մէջ վայելքներ փնտռեն, ծոյլ ըլլան, խնամուած հրթրութեամբ եւ դաստիարակութեամբ չպատրաստուին կեանքի պայքարին: Կարապիւր՝ Խորասանճեանց նոր սերունդին երէցը, շատ կանուխէն գործի մարդ եւ հայր եղաւ. հայր մը երկու տունկրու. իր նոր կազմած օճախին, եւ Աստուծոհանց տան, որուն փեսայայած էր: Մուշէն վերադարձէս հօքը՝ երկարատևն վայելելի իրենց ասպնջականութիւնը. չզգացուցին ինձ օտարութիւնը, եւ միշտ ուրախութիւն զգայի հոն՝ մօտէն անանելով ողբացեալ բարեկամիս առանին հայրական կեանքը:

Խորասանճեան վաճառատունը իր հարստութիւնն ու համբաւը կը պարտի ձեռներեցութեան եւ ուղղամտութեան: Կարապիւր իր հօր եւ հօրեղբոր անմիջական հսկողութեան եւ խնամքին տակ՝ յաւուսումնասիրած էր այդ երկու պայմանները, եւ իր կողմէն աւելի եւս գորգացուցած եւ ուժաւորուած էր զանոնք: Կ. Պոլսի հայ վաճառականութեան եւ գրամական գործունէութեան մէջ Խորասանճեան վաճառատունը իրեն յատուկ բարձր վստահութեան եւ վարկի դիրքը ամուր բռնեց, եւ վտանգներու սոցեւ իսկ ամուր մնաց այդ դիրքին վրայ: Կարապիւր ողին դարձած էր իրենց վաճառատան Մաքրութիւն, կոկիկութիւն, վճռականութիւն. մարդ ասո՛նց կը հանդիպի երբ կը մանէ Խորասանճեան վաճառատունը, կամ գրասենեակէն ներս: Եթէ եւրոպական ճարտարարուեստի կեդրոններ ճանչցած են Հայ վաճառականութիւնը, անշուշտ ասոր մէջ նշանակելի տեղ մը պէտք է տալ Խորասանճեանց, որոնց անունը դպրոցականներն ալ գիտեն, երկարատևնէ ի վեր թուղթերու եւ գրիչների մը վրայ տպուորուած՝ ընդարձակ շրջան կ'ընեն, ինչպէս Եւրոպական ճարտարարուեստի գործարաններու, նոյնպէս Թուրքիոյ մէջ, Պոլիս եւ Գաւառները, ըլլայ վարժարաններու, ըլլայ փոքր վաճառատուներու մէջ: Իսկ գործի մարդ կը սիրէր քաջալերել գաւառացի փոքր վա-

ճառատունները, բաւական էր որ անգամ մը վստահէր անոնց պարկեշտութեան վրայ:

Կարապետ էֆ. ազգային գործերու ալ անձնութիւնը էր: Ան կը մասնակցէր՝ իր շնորհալի տիկնոջ հետ՝ այն բոլոր համախըմբումներուն, որոնց նպատակը, զուարճութենէ եւ վայելքէ աւելի, Հայ ազգին գեղարուեստական ճաշակը օտարներու առջեւ չեշտելու եւ բարձր պահելու կը ծառայէր: Ինքը, թէեւ երիտասարդ, բայց կանոնախնայ անդամակցած էր Բերայի Կալուածոց Հոգաբարձութեան, ուր Տ. Թոգաթեանի եւ Մ. Մուրատեանի նման անձնուէր Հայերու գործակցելով, նախանձելի վիճակի մը հասուցին այդ ձեռնարկութիւնը, որ տարիներ ետքը հասոյթի հաստատուն, տեւական աղբիւր մը պիտի ըլլայ Կ. Պոլսի ամենէն յառաջագէտ արուարձանին Հայութեան եկեղեցական — կրթական կեանքի զարգացման: Լսուիս, զրամական այս խոշոր ձեռնարկին մէջ, իր եւ իր ընկերներուն ցոյց տուած մաքուր, շատ մաքուր գործունէութիւնը բաւական էր չեշտել՝ ցնահատելու համար իր ազգային գործունէութիւնը Նոյնչափ սիրով փարեցաւ Դպրեւանքի խնամակալութեան, ստանձնելով զանապիտի պաշտօնը:

Ինքը՝ գործնական մարդ եւ զործի մարդ՝ գործ չունէր սին խօսքերու եւ վէճերու հետ: Ուր որ լուրջ գործ եւ ձեռնարկ կար եւ ներքէր իր ժամանակը՝ հոն էր ինքը: Կը սիրէր լուրջ խօսքերը եւ գործերը: Մեծ հրճուանքով դիտած եմ իր հետաքրքրութիւնները եւ տրուած բացատրութեանց առջեւ իր սրտաբոխ հրճուանքը:

Այս տեղ մասնաւորապէս եւ մեծ դովեստով պէտք է յիշեմ իր երկու տարուան (1905 եւ 1906) լուրջ գործակցութիւնը եկեղեցադիտական Լոյսի հրատարակութեան միջոցին: Ո՛չ միայն զրամի կողմէն ապահովեց Լոյսի հրատարակութիւնը երկու տարուան համար, ու եւ պատահականութեան դէմ, այլ նաեւ իր վրայ առաւ. թերթին առաջման հոգը, հաշուական բոլոր գործերը, իր հաշուա-

կան թղթակցութիւններով, եւ ասկից զատ շատ անգամ օգնեց ինձ փորձերու սրբադրութեան մէջ, քանի որ, իր իսկ առաջարկած պայմանին համեմատ, ես ալ պէտք է ստանձնէի Լոյսի խմբագրական ամբողջ հոգն ու պատասխանատուութիւնը, որ շատ դժբախտաբար չէր վաճառատան մէջ ինծի սեղանակ մըն ալ յատկացուց, բայց շատ անգամ իրենց գրասենեակին մէջ գրասեղաններէ մէկուն առջեւ կ'աշխատէի: Այնքան անկողծ եւ քաջաւերջ էր իր եւ միւս Խորասանձեանց վերաբերումը Լոյսի հրատարակութեան:

Երկու տարուան պայմանագրով ետքը, երբ որոշեցինք զադրեցնել թերթը, — քանի որ մէկ կողմէն թերթին տէրը, Պարտիզակցի Վահան Վարդ, անտանելի կը դառնար, եւ միւս կողմէն Կէօչէ օղլու Անտօն կը սպառնար Խորասանձեանց, որ չօգնեն այս եկեղեցական-յեղափոխական^(*) թերթին —, ես վերջին թիւին հետ ուղերձ մը հրատարակեցի իր անուան Շատ գոհ չմնաց. որովհետեւ ուրիշներու կարծիքով տարփողում (ռէքլամ) պիտի հասկըցուէր այդ Բայց՝ ո՛չ ինքը, ոչ ալ ես կը սիրէինք ռեֆլաւը, եւ Ուղերձիս մէջ ալ աւելորդ բառ մը չկար. իր գործակցութիւնը այնքան լուրջ եւ պատուարներ էր որ, եթէ գրաքննութեան բարբարոսութիւնը չըլլար եւ անկախ թերթ մը ունենալինք, պիտի շարունակէինք Լոյսի հրատարակութիւնը, որ այնքան յաջող ընդունելութիւն պտաւ եւ որուն օգուտը կը գնահատէր այնքան անձնութեամբ: Այս կերպով Կարապետ էֆ. Խորասանձեանի անունն ու գործակցութիւնը անբաժան օրիտի ըլլայ Լոյսի պատմութիւնէն:

Իր բարեկամութիւնն ալ նշանակելի էր: Երջայատուած էր այնպիսի անձերէ, որոնք միշտ պատուաբեր անգամներն եղած են Բերայի հայ համախմբումներուն մէջ: Տունէն դուրս զուարճութիւն չունէր գրեթէ:

Բարեկամ էր Կարպիս բարի գործերու: Ես շատ անգամ բարեխօսած եմ իր մօտ այս ինչ կամ այն ինչ ուսանողի պէտքին եւ կարօտութեան համար, եւ միշտ առա-

տաճեան գտած եմ զինքը: Մարդիկ յանձնարարած եմ իրեն գաւառներէն որպէս զի անոնց վարկ սոյ, գործեր ընէ, եւ երբեք չէ մերժած: Ինք, որ հաշիւի մէջ խստապահանջ էր, բարի գործերու համար չուէր ո եւ է խօսք եւ գիտողութիւն: Կուտար սիրով եւ քաջալերելով: Կոնպէս որ ուրիշ անգամ մը դարձեալ կրնայիր դիմել առանց նեղուելու:

Ահա՛ այսպիսի ձիրքերով ու շնորհներով օժտուած եւ օժուած բարեկամ մը կը կորսնցնէ Պոլսի Հայութիւնը իր մէջէն, զիս իր կեանքի առոյգ շրջանին:

Ես չուզեցի հաւատալ իր մահուան: Դեռ քանի մը շաբաթ առաջ կը գրէր ինձ, թէ Եւրոպա գացած էր իր աղիքի ակտրութիւնը բուժել տալու համար: Ես, զժբախտ բարեկամիս այս տկարութիւնն ալ չէի գիտեր, որովհետեւ միշտ առոյգ կը տեսնէի զինքը եւ իր գործին զուիւր շարունակ: Եւ սակայն հիւանդ է եղեր բարեկամիս, բոլիս եւ ազնիւ սիրտը, որ զեռ բաքախելու էր:

Իր պատկի օրհնութիւններուն մազթանքներս խառնեցի Սեւ Ծովի ափերէն, Սամսոնէն, եւ հիմայ իր անհաւատալի մահուան գոյժին՝ վիշտերս կը պոթեկամ Անատոլոյի կեդրոնէն, Կարմիր-Վանքէն, ուր սա՛ մարմարներս եւ քարերու տակ յաւիտեանս ննջողներու մթնոլորտը տըխուր բան մը կ'աւելցնէ Կարպիսի մահուան իրականութեան վրայ, որ կ'ըմբոստացնէ ուզեզս:

Ա՛լ հերիք սակայն, ջիղերս կը սարստան: Օրհնեալ ըլլայ Աստուածային Կամքը:

Վստահ եմ որ Խորասանճեան զերդաստանը իր ծանօթ բարութեամբ եւ բարեպաշտութեամբ պիտի զիմագրաւէ այն անտանիկի վիշտերուն եւ ցաւերուն, որոնք կը ծանրանան իր վրայ Օննիկին եւ Կարպիսի անսպասելի կորուստներէն: Ես պարզապէս կը ակարանամ միսթարական խօսք մը գտնելու Կարպիսի անշնչացումով վերաւորուած սիրտերու: Վստահ զի ես ալ վերաւոր մըն եմ հիմա: Բայց չեմ քաջութիւն կոչում ընելէ անոնց զիտակցու-

թեան եւ փորձառութեան, որպէս զի չյուսահատին կորուստի մը առջեւ, որուն վերադարձը անկարելի է ո եւ է գնով:

Խորասանճեան օճախը զեռ ունի իր կորովի ոյժերը, որոնք առջն կերպով պատրաստուած են թեթեւեղութեամբ ուսած վիշտը, բարձր պահելու Ազգի եւ աշխարհի առջեւ իրենց հայրենական եւ պատուաւոր վաճառատան յարգն ու վարկը:

Առջն կողմէ բայարձակ անկեղծութեամբ եւ խորին վշտակցութեամբ տըտայայտուած զգացումները սփովանքի իրական նշանակութիւնը ունին, որոնց կը միայնեմ հեռուէն վշտի եւ ցաւակցութեան այս քանի մը խօսքերը, եւ կը խնդրեմ որ ասոնք ընդունուին իբր վըշտակցութեան գիր, զատ զատ գրուած իր սուգով վրդովուած ծանօթներու եւ բարեկամներու:

Հանգի՛ր, ո՛վ բարեկամ, քեզ սիրողներու արցունքին եւ համակրանքին մէջ: Քիչ ապրեցար, բայց շատ գործեցիր: Օրհնեալ ըլլայ յիշատակդ:

ԲԱԲԳԷՆ ԵՊԻՍԿ.

1911 Յուլիս 8

Կարմիր-Վանք, Անկիւրիս

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՎ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՍՏՈՒԹԻՒՆ(1)

Գ.

Յուլիոս Թեթեալայ կը յառաջանար, հոգին նուազ տխուր, քանի՛ կը մօտենար Քրիստոնեաներու զիւղին, երեւակայութեանը առջեւ բերելով քրիստոնեաներու կեանքին զանազան պատկերներ: Արեւը կը խոնարհէր հորիզոնին վրայ: Յուլիոս կանգ առնելու վրայ էր՝ քիչ մը հանգչելու համար, երբ հանդիպեցաւ տարէց մարդու մը, որ ճամբուն եւ զերքը նստած իրիկուան ճաշը կ'ընէր:

(1) Շար. տես Թիւ 21, 22, 23, 24, 25, 26:

Այդ մարդն երբ Յուլիոսը տեսաւ՝
 ժպտելով ըսաւ անոր.

— Բարի իրիկուն, երկուստարդ, երբ
 կար ճամբայ մ'ուռնիք ձեր առջին. նստէ՛ք,
 հանգչեցէ՛ք վայրկեան մը:

Յուլիոս շնորհակալութիւն յայտնելով
 նստաւ անոր քով:

— Ո՛ւր կ'երթաք, հարցուց մարդը:

— Քրիստոնեաներուն քով կ'երթամ,
 պատասխանեց Յուլիոս:

Յետոյ կարգ մը հարց պատասխանի-
 ներ փոխանակելով, Յուլիոս անոր պատ-
 մեց իր ամբողջ կեանքը, ինչպէս նաեւ
 այն բարոյական պայքարը որ այս որոշ-
 ման յանգեցուցեր էր զինքը: Օտարականը
 լո՛րն ուշադրութեամբ մտիկ կ'ընէր իրենս
 երբ Յուլիոս վերջացուց իր պատմու-
 թիւնը, ըսաւ անոր.

— Մի՛ ընէք ատիկա, երիտասարդ,
 այդ կերպով պիտի հեռանայիք շիտակ
 ճամբէն: Ես կը ճանչնամ կեանքը, դուք
 չէք ճանչնար: Մտիկ րբէք, ես ալ պիտի
 խօսիմ իմ կարգիս, եւ պիտի ըսեմ ինչ
 որ կը խորհիմ ձեր յուզումներուն եւ
 որոշումներուն վրայ: Ատիկէ՛ վերջը պիտի
 ընտրէք այն ճամբան զոր ամէնէն աւելի
 նպաստաւոր պիտի դնէք: Դուք երկուս-
 տարդ էք, հարուստ, գեղեցիկ, հուժկու:
 Ձեր հոգին փոթորիկ մըն է անսանձ կիր-
 քերու: Հանդարտիկ առանձնաւորան մը կը
 փնտռէք, ուր ձեր կիրքերը չյուզուին,
 որպէս զի գերծ մնաք անոնց պատճառած
 տառապանքներէն: Այդ ապաստարանը
 գտնել կը կարծէք քրիստոնեաներուն քով:
 Արդ, ես պարտաւոր եմ ձեզի ըսելու թէ
 այդ կարգի անքոյթ նաւահանգիստ մը
 գոյութիւն չունի ո՛չ այնտեղ եւ ոչ ալ
 ուրիշ ու եւ տեղ մը, որովհետեւ ձեզ
 յուզող եւ վրդուող բանը ոչ թէ կիլիկիոյ
 կամ Հռոմի մէջ է, այլ նոյն իսկ ձեր մէջ
 կը գտնուի: Ձեր կիրքերն ամէն տեղ
 պիտի հետեւին ձեզի, եւ ո՛րչափ աւելի
 մեկուսայեալ վայր մը ապրիք, այնքան
 աւելի բուռն թափով մը պիտի յայտ-
 նուին:

Քրիստոնեաներու սխալը կամ յան-
 ցանքը (չեմ ուղեր գատել գանոնք), այն-

տեղ կը կայանայ որ բողոքովին կ'անգի-
 տանան մարդկային բնութիւնը: Միակ
 մարդիկը, որ կարող են գործադրել անոնց
 սկզբունքներ, ծերերն են որ որոնց մէջ
 մարդկային կիրքի վերջին մոխրները
 մարած են տարիներու ձիւնն ու սառնա-
 մանիքը: Երկուստարդութեան թարմ տա-
 րիքն եւ ոյժն ունեցող մը, մահաւանդ
 ձեզ նման երկուստարդ մը, որ տակաւին
 ճաշակած չէ կեանքի պտուղները եւ չի
 գիտեր թէ ինչ բանի կը բաղձայ, չի
 կրնար անոնց օրէնքներուն ենթարկել
 ինքզինքը. որովհետեւ, այլ օրէնքները
 չինուած են ոչ թէ մարդկային բնութեան
 համաձայն, այլ իրենց հիմնադրին՝ Քրիս-
 տոսի՝ տարօրինակ ըմբռնումին համեմատ:
 Եթէ անոնց ազանդին մասնակցիք, պիտի
 տառապիք դարձեալ առաջուան նման,
 ճիշտ միեւնոյն պատճառով. միայն թէ
 քիչ մը աւելի պիտի տառապիք:

Մինչեւ հիմա ձեր կիրքերը խաբած եւ
 դէշ ճամբաներու առաջնորդած են զձեզ:
 Բայց անգամ մը շեղելէ եւ ինքզինքնիդ
 կորսնցնելէ ետքը, ձեր ձեռքն է ետ դառ-
 նալ եւ շիտակ ճամբուն մէջ մտնել նորէն,
 ինչ որ՝ սակայն՝ չպիտի արգիլէ զձեզ
 զոհացնելու ձեր կիրքերը, զանոնք կառա-
 վարելով հանդերձ՝ լաւագոյն կերպով
 վայելելու համար կեանքը: Եթէ, ընդհա-
 կառակն, ինքզինքնիդ հարկադրէք Քրիս-
 տոնեաներուն պէս ապրելու եւ ձեր կիր-
 քերը դրիթէ բռնի զսպելու աւելի պիտի
 մոլորիք, եւ անդամանելի խրպով հա-
 զոտըումէ՛ք առապանքներու պիտի են-
 թարկուիք՝ ձեր կիրքերը ջնջել ախտաւե-
 լով, ինչ որ հակառակ է մարդկային
 բնութեան: Ազատ ճամբայ սուէք ջուրե-
 րուն, եւ այն ատեն կ'ոռոգեն երկիրը,
 կը բուսցնեն տունկերը, կը բեղնաւորեն
 մարդագետնիները, եւ կը յագեցնեն ար-
 ջառները. բայց գոցեցէ՛ք ճամբաները, եւ
 ահա՛ երկիրը կը պեղեն, եւ տղմուտ
 ճահիճի կը վերածեն: Այդպէ՛ս է կիրքե-
 րուն համար ալ. Քրիստոնեաներու սկզբ-
 րունքները) բայց ի բանի մը վարդապետու-
 թիւններէ որ կը սփոփեն եւ կը սրտա-
 պնդեն զանոնք, եւ որոնց վրայ չեմ ու-

զեր խօսիլ այս վայրկենին), իրենց ամենորոշայ կեանքին մէջ, սա կերպով կրնայ ամփոփուիլ, Անոնք չեն թելադրեր ո եւ է բռնութիւն. չեն սիրեր պատերազմը եւ դատարանները, կը մերժեն ճանչնալ սեփականատիրութիւնը, կ'ուրանան արուեստներն եւ գիտութիւնները, վերջապէս հրաժեշտ կուտան այն ամէնքաներուն, որ կեանքը հաճելի եւ զուարթ ընծայելու կը նպաստեն:

Նորէն ասիկայ պիտի կրնար քալել, եթէ բոլոր Բրիտանիաներն ալ մօտենալին այն նկարագրութեան զոր կ'ընեն իրենց Վարդապետին նկատմամբ: Բայց մարդոց սիրտը չար է, անոնք ընդհանրապէս գերի են իրենց կիրքերուն: Վայրենիները բնաւ քաշուիլ չունին իրարմէ, եւ իրենց մէ մէկ հասնի իսկ եթէ ազատ թափ մը տար իր կիրքերուն եւ բնազդներուն, պիտի կրնար քանգել ամբողջ աշխարհը, եթէ բոլոր միւսներն համակերպէին հոթեամբ, ինչպէս կ'ընեն Բրիտանիաները: Եթէ աստուածները մարդոց տուած են վրէժխնդրութեան եւ նոյն իսկ չարութեան զգացումները՝ կեղծաւորութեան զէմ, պէտք է հաւատանք որ անոնք այդպէս բռն են, որովհետեւ այդ զգացումները անհրաժեշտ էին՝ մարդկային գոյութեան պահպանման համար: Բրիտանիաները կը սնդեն թէ այդ զգացումները գէշ են, թէ ասոնք արգելք կ'ըլլան մարդոց հրջանկութեան, եւ թէ ասոնք եթէ գոյութիւն չունենալին, ա'լ ոչ պատերազմ պիտի ըլլար, ո'չ մարդասպանութեան եւ ոչ ալ դատապարտութիւններ: Ասիկա ճշմարիտ է, բայց գործադրութիւնն անկարելի: Ասիկա պիտի նմանէր ըսելու թէ մարդիկ եթէ կարենային ուսել եւ խմելէ ետ կենալ, հաւասարապէս աւելի երջանիկ պիտի ըլլային: Զնշելով մարդոց պէտքերը, միւսնոյն հարուածով ջնջուած կ'ըլլան անկէ առաջ զայիւր բոլոր աղէտները: Բայց այդ մասին ենթադրութիւններ միայն կարելի է ընել, եւ այս բոլորը չեն կրնար փոխել մարդկային բնութիւնը:

Եթէ մի քանի անհատներ — ենթադրենք թէ 60 հոգի — ըստին — մերժէին

ուսէ անունդ առնիլ, անօթութենէ պիտի մոռնէին, եւ ասիկա չպիտի փոխէր աշխարհիս երեսը: Միեւնոյնն է բոլոր կիրքերուն համար: Բարկութիւնը, հպարտութիւնը, վրէժխնդրութեան բաշտանքը չեն կրնար քաշուիլ հանուիլ հոգիէն. ինչպէս պէտքերը չեն կրնար ջնջուիլ մարմնոյն համար:

Միեւնոյն գաղափարը կրնայ պատշաճիլ սեփականութեան սկզբունքին. որուն գոյութիւնը ճանչնալ չեն ուզեր եղեր Բրիտանիաները: Եթէ այդ սկզբունքը ջնջէք, ա'լ մարդ մէկ հտաիկ այդի մը չի անկեր ու չի հասցներ, ոչ մէկ հատ ընտանի կենդանի չի բուծաներ: Բրիտանիաները կ'ըսեն թէ անհատական ստացուածք չեն ճանչնար եւ սակայն այդ սեփականութեան արդիւնքները կը վայելեն. կը քարոզեն թէ ամէն բան հասարակաց է իրենց մէջ եւ ամենքն ալ ունեցածնին կը միտցնեն. եւ սակայն բոլոր ինչ որ կը բերեն եւ ինչ որ կը ստանան, ստացուածք ունեցող անձերէ կուգայ: Պարզապէս փոշի կը ցանեն աշխրհու, հաւատացնելու համար իրենց անշահախնդրութիւնը. լաւ եւս, իրենք իսկ կը խաբեն ինքզինքնին:

Կ'ըսէք թէ անոնք ձեռական աշխատութեամբ կը պարապին՝ ապրուստին հոգալու համար, բայց ինչ որ կ'որտաղրեն, չպիտի բաւէր իրեն պէտքերուն, եթէ չօգտուէին սեփականութեան իրաւունքը յարգող անձերու արտադրութիւնէն: Եթէ յաջողին իրենց գոյութիւնը պահպանել իրենց աշխատութեամբ, իրենց ընկերային գոյութեան մէջ տեղ չպիտի մնար գիտութեանց եւ գեղարուեստներու: Անոնք կ'ուրանան քաղաքակրթութեան առուելութիւնները, եւ ուրիշ կերպ չեն կրնար ընել: Իրենց վարդապետութեան գլխաւոր նպատակն է մարդը վերադարձնել իր նախնական վիճակին, վայրենութեան, անհասկացելիութեան: Անոնք կը մերժեն գերագոյն ձիրքերը, որոնք առանձնաշնորհութիւնն են մարդու:

Մարդու՝ իր ստորնութիւնէն չկարմրելու ամենէն ապահով միջոցն է արհամարհել ազնուականութիւնը եւ պայքարիլ

անոր դէմ իրենց վարդապետը ազէտ խաբեբայ մըն էր, եւ իրենք բաւական կը յաջողին անոր նմանելու փորձերուն մէջ, Բայց աստի ամբարիշտ են անոնք, չեն ուզելու ճանչնալ աստուածները, եւ կամ անոնց միջամտութիւնը՝ մարգկային գործերու մէջ, Ուրիշ մէկը չեն ճանչնար, եթէ ոչ իրենց Հայրը եւ իրենց Վարդապետը, որ — կ'ըսեն թէ — ինքն իսկ յայտնած է իրենց՝ կեանքի բոլոր գաղտնիքները: Իրենց ամբողջ վարդապետութիւնը զգալատ աչքիկապուկ մըն է:

ԼԵՈՆ ԹՈԼՍՏՈՅ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԿԻԼԻԿԻԱ՝ ՇՈԳԵԻՈՐԱՊԷՍ ԼԲՈՒԱՇ

Սրտի սեղմումով եւ խորունկ յուզումով կարգացինք Կիլիկիոյ վշտակիր Հայրապետին. Վեհաշնորհ Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոսին նոր մէկ արտասուէ կոչը՝ սեղմուած առ կրօնասէր ազգայինս, որուն մէջ հրատարակելով Պատրիարքարանի պատասխանը թէ «նպատակները դադրած են, նպատակից յանձնաժողովը հրաժարած է հետաւարար Պատրիարքարանը ալիւս ի վիճակի չէ ոեւէ նպատակ յատկացնելու», կը ծանուցանէ թէ ամենէն աւելի հարուածուած Անտիոքի, Հասան-Պէյլի, Սառնիի, Կէօք Չայրիի, Պաղչէի, Լաիաճլիի, Համիտիէի (այժմ Ճիհան), եւ Քիւլֆիլիի (Մարաշ) անտէր անտիրական ժողովրդեան հոգեւոր միաբնակութեան կոչուած քահանաներու յատկացուած ընդ ամէնը ամսական տասներեք ու կէս ոսկիի, կամ տարեկան 16½ ոսկիի չգոյութեան հետեւանօք, ամբողջ այդ քաղաքներն եւ գիւղերը զուրկ պիտի մնան հոգեւոր միաբնակութենէ: «Պարտաւորեցանք, կը գրէ Ն. Սըրբազնութիւնը, այս կոչն ուղղել ամէնուն, որ կը զգան, գիտեն եւ կը հաւատան թէ արհաւիրքներէ եւ մահուան ժանիքներէն ազատուողներուն համար հացին չափ անհրաժեշտ է Հոգեւորն ու հոգեւոր միա-

թարութիւնը: Օտարները փեշերով դրամ կը թափեն, սիրող թշուառութենէն ու կարօտութենէն օգտուելու համար, մենք տարեկան 16½ ոսկի խնայելով՝ առանց քահանայի, առանց աղօթքի, եւ առանց եկեղեցիի՝ թողունք սփոփանքի, աղօթքի եւ քահանայի կարօտ հաղարաւոր թշուառները: Վշտակիր Հայրապետին սրտայոյզ խօսքերն տոյքան պերճախօս են, որ աւելորդ կը համարինք բոլոր մը աւելցնել, եւ յիշեցնել քարեսէր, կրօնասէր ազգայնոց՝ իրենց նուիրական պարտականութիւնը, յատկապէս այս նպատակին համար իրենց նպաստը փութացնելու՝ ուղղակի վեհ. կաթողիկոսին կամ Ազգ. Պատրիարքարանի:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կաթողիկոսական ընտրութեան նախապատրաստութիւններն սկսուած են, ինչպէս Ռուսահայ, նոյնպէս ալ Թրքահայ զանազան գաւառներու մէջ Տրապիզոնէն: Վիճակին առաջնորդ Սամուէլեան Տ. Սեբրովբէ Վ. ի հետ, իբր աշխարհական պատգամաւոր էջմիածին պիտի երթայ Նշան էֆ. Անդրէասեան: Բալուէն ալիւս պատգամաւոր ընտրուած է Պօղոս էֆ. Պօղեան, որ պիտի երթայ Վիճակին առաջնորդ Տ. Եզնիկ Մ. Վ. Գալթագեհանի հետ: Պատր. Տեղապահ Ս. Հայրը նոր չըջարեւական մը ուղղից գաւառները, փութացնելու պատգամաւորներու ընտրութիւնը, եւ եթէ առ այս դժուարութիւն ծագի, տեղեկագրելու Պատրիարքարան: Միւս կողմէ Պոլսէն ընտրուելիք պատգամաւոր մասին Ազգ. Ժողովոյ ընթացքը ճշգրտեցաւ, ինչպէս կը տեսնուի քիչ մը անպին: Ընտրելիներու վրայ մտածող չկայ առ այժմ, ոչ իսկ կարծիքի տեւէ փոխանակութիւն: Թրքահայոց մէջ: Նոյնը չէ Ռուսահայոց մէջ, ուր որոշ հոգանք մը կը գործէ ի նըպաստ Օրմանեան Ա. ի Թիֆլիզէն 101 վաճառականներէն ետքը, 3½ քահանաներ Տեղապահ Ս. Հօր ուղղուած գրութեամբ մը, եւ այս անգամ ալ Շուշիի Հայիրը հանրադրութեամբ մը փափաք կը յայտնեն որ Ազգ. Ժողովը Օրմանեան Ա. ի ի նպաստ

կամ ընդդէմ վճիռ մը տայ փութով եւ հանրային կարծիքը լուսաբանուի։ Անհրաժեշտ է, խղճի պարտք մ'է փութացնել այս վճիռը՝ կտրուկ կոտորածներէն առաջ՝ ունէ ամբաստանեալ եկեղեցական համար, Օրմանեան թէ Երէցեան Ս. Ներսէս ըլլան անոնք։ Այս կը պահանջէ ազգին չափը Իրենց հետութեամբ ու կարողութեամբ ընդհանուր համարում վայելող եկեղեցականներու սովին մէջ, պէտք է ընտրողները աչքի առջեւ ունենան ազգին բոլոր տրամադրելի եւ կարող եկեղեցականները, պայմանաւ որ անոնք մաքուր, զերծ ըլլան ու եւ է արատէ։

ԿԻԼԻԿԻԱՅԷՆ նպաստ խնդրող ստիպողական հեռագրերու վրայ, Բաղաք. Ժողովն անցեալ ուրբաթ օր արտօնած է որ 500 ոսկիի փոխառութիւն մը կնքուի Բայց շատ անբաւական գումար մ է այս պէտքին միծուծեան առջեւ, հետեւապէս Որբախնամը անգործութեան մասնուած է, քրովհետեւ կառավարութիւնն ալ սակաւին վճարած չէ Երեսի. Ժողովին կողմէ քուէարկուած 10,000 ոսկին, որուն 2000 ոսկին զեղչել կ'ուզէ՝ Հայ-հռոմէականաց եւ Հայ-բողոքականաց տրուելու համար։

ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ լուրերը կը շարունակեն զանազան կողմերէ։ Չարսանճագի Առաջն. տեղուպահ Տ. Համազասպ վրդ.ի վերջին հեռագիրը՝ յուսահատական է, կ'ըսէ, Հայերու վիճակը Չարսանճագիին արտերը ձեռքէն կ'առնուին, պարտէզն ու այգին կը յափշտակուին, ամուսինն ու ազգիկը կը բռնաբարուին, եւ ամենէն անպատիւ միջոցներով սուսնէն կը վռնաուի ու կը ծեծուի։ Այս կացութեան առջեւ Տ. Համազասպ վրդ. կ'ըսէ թէ իրեն կը մնայ թողուլ եւ հեռանալ պաշտօնէն։ Այս հրաժարականն անշուշտ չպիտի ընդունուի։ Առաջն. տեղապահին այդ յուսահատ որոշման գլխաւոր շարժառիթն է անշուշտ տեղային իշխանութեանց բացարձակ պաշտպանութիւնը՝ հարստահարիչ Բուրդ պէյերուն, մանաւանդ Խարբեբէի կուսակալին սպառնալից ընթացքը իրեն (Համազասպ վրդ.) դէմ «Խել-

քերնիդ գլուխնիդ ժողովեցէք, օրինական խիստ պատիմներ առաջ բերող արարքներէ պէտք է զլուշանաք» կ'ըսէ անոր։ Այս խօսքերը՝ անոր համար որ Տեղապահը իր զրկուած հօտին անտեսուած իրաւունքները կը պաշտպանէ։ Միւս կողմէ Ժաւնաւակի մէջ տիրութեամբ կը կարգանք թէ Դատական նախարարը շատ անտարբեր եւ խուսափողական բնթացք մը ցոյց տուեր է Պատր. Տեղապահ Ս. Հօր վերջին դիմումին միջոցին, երբ կը պահանջէր՝ 1. Խոյթի ոճրագործներու դատավարութեան ուրիշ տեղ կոտորուիլը, 2. Ատանայի բանտարկեալներէն ոչ թէ 15 տարուան դատապարտումներուն ալ բոլոր դատապարտեալներուն ներում շնորհուիլը, 3. Երուսաղէմի վանքապատկան այգիին իրր մահչիւղ չգրաւուիլը, 4. Հողային հարստահարութեանց վեշաբերեալ բոլոր խնդրոց լուծուիլը, եւն.։ Նախարարին ձգձողական խօսքերուն՝ Տեղապահ Ս. պատասխանած է թէ երբ կառավարութիւնը հայկական ամէն խնդրոց առթիւ կախակայեալ վիճակ մը կը ստեղծէ, բնական է որ Հայերն ալ կը սրտաբեկին եւ կը հեռանան երկրէն, իրենց օգտակարութեան բաժինը դադարեցնելու մէջ օտարներուն յատկացնելով։ Այս տխուր վիճակը կը հաստատուի Լա Պառս s'O-րիսան թերթին կողմէ ալ որ կը գրէ թէ կառավարութիւնն երբեք մտադրութիւն չունի հողային հարցը լուծելու։ Պատրիարքարանը նոր քագրիրով մը կրկին պիտի ընէ իր պահանջումները, եւ եթէ մօտ ժամանակէն կտրուկ պատասխան մը չտանայ, Վարչութիւնը խնդիրը պիտի յանձնէ Ազգ. Ժողովին, ամէն պատասխանատուութիւն անոր թողուլով. ազգին վիճակն ու ուղղութիւնը ճշդելու համար։

ԱՐՄԱՇԻ Դպրեմանքի ինտամակալութիւնը Վարչութեան կը գրէ թէ այս տարի ի վիճակի չէ նոր աշակերտ ընդունելու, որովհետեւ նախապէս առնուելիք 16 աշակերտի տեղ 26 ընդունած է։

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ անցեալ ուրբաթ օր կրցաւ գտնել 71ի մեծամասնութիւնը, եւ իր կարեւորագոյն գործն եղաւ ընտրել

Քաղաք. ժողովոյ պահապան չորս ան-
դամները: Քուէներու ստուար մեծաւան-
նութեամբ նոյն ժողովոյ անդամ ընտրուե-
ցան, տիրաք՝ Աբրահամ Տ. Յակոբեան,
Վարդգէս Սերէնկիւլեան, Վահան Փափազ-
եան, եւ Տիրան Երկանեան: — Ուրիշ կա-
րեւորագոյն խնդիր մը եղաւ որոշել թէ
Ազգ. ժողովը ի՞նչ ձեւով պէտք է մաս-
նակցի Ամենայն Հայոց կաթողիկոսի ըն-
տրութեան: Զանազան առաջարկներ ե-
ղան: Տըթ. Թիւլեան առաջարկեց որ միայն
Պոլսոյ երեսփոխանները կատարեն աշ-
խարհական պատուիրակի ընտրութիւնը,
կամ ուղղակի ժողովուրդը կատարէ: Խո-
ճասարեան էֆ.ի առաջարկն էր՝ վերա-
դառնալ հին ձեւին, այն է բոլոր գաւառի
առաջնորդներուն կարծիքն առնել, եւ յե-
տոյ Ազգ. ընդհ. ժողովոյ մէջ ալ քուէար-
կել, եւ ա՛յս քուէարկութեան արդիւնքը
պարտաւորիչ դարձնել գաւառի պատուի-
րակներուն: Կակառակ պարագային հրա-
ժարիլ ընտրութեան ուղղակի միջամտելէ,
եւ Պոլսոյ պատուիրակին ընտրութիւնը
թողուլ կա՛մ Վարչութեան, կամ Թաղ-
Խորհրդոց ատենապետներէն կազմուած
մարմնոյ մը: Վահան էֆ. Թէքեան ըսաւ
թէ Թրքահայոց մասնակցելու ձեւը պէտք
է Ազգ. ժողովը ի՞նչ որոշէր, եւ թէ Ազգ.
ժողովը պէտք է խօսի ընտրելիներու մա-
սին, եւ մնացաւ տայ ընտրուած պատգամ-
ւորին, որ բարոյական ազդեցութիւն մը
կրնայ սնննալ գաւառաց վրայ ալ: Պո-
լադեան վրդ. պնդելով հանգերձ հնար ե-
ղածին չափ մեծ ձայնով ընտրութեան
մասնակցելու պէտքին վրայ, համամիտ
չգտնուեցաւ ընտրելիները պարտաւորիչ
ընելու առաջարկին, որովհետեւ երաշխա-
ւորութիւն չկայ թէ գաւառաց պատգա-
մաւորները պիտի յարգեն ժողովին որո-
շումը: Մեծ ուշադրութեամբ լսուեցան
Տեղապահ Ս. Հօր քաջատրութիւնները՝
Պաշտօնէիայի հաստատումէն ի վեր, —
Ազգ. Սահմանադրութենէն առաջ եւ ետ-
քը, — կատարուած ընտրութիւններու
մասին: Ենչտեց սա կէտը թէ Ռուսահայք,
հակառակ իրենց մէկ ու կէս միլիոն բը-
նակչութեան, 18 քուէ միայն կուտան,

որոնց վեցը՝ էջմիածնի միաբաններունն է:
Յիշեց թէ Ռուս կառավարութիւնը մեր-
ժեց Թրքահայ երկու պատգամաւորներու
140 ձայն ներկայացնելու իրաւունքը, ա-
ռանց սակայն բեկանելու Գէորգ Դ.ի ըն-
տրութիւնը: Ի պատիւ Սինօղին յայտարա-
րեց թէ անիկա միշտ յարգած է Ազգ. Ժո-
ղովին իրաւասութիւնը, եւ Ռուսահայք
ջանացած են միշտ գոհացում տալ Թրքա-
հայոց եւ մաքսաւած են պետութեան կար-
գադրութեանց դէմ: Ռուս կառավարու-
թիւնն եւ Սինօղը չեն ձանձնար Պաշա-
ժեմիայով որոշուածէն տարբեր կերպ.
մանաւանդ որ հիմա պարագաները վտի-
ռած են, եւ Ռուսահայք իրենք կ'ուզեն
ըլլալ ազդեցիկ: Հետեւապէս ժողովը ո-
րոշում տալէ ստաջ պէտք է մտածէ եւ
այնպիսի վճիռ մը տայ որ Սինօղը Ռուս
կառավարութեան առջեւ դժուարութեան
չենթարկուի: Տեղապահ Ս.ն ի վերջոյ փա-
փաք յայտնեց որ ոչ միայն աշխարհական,
այլեւ եկեղեց. պատգամաւորն Ազգ. Ժո-
ղովն ընտրէ: Դաւիթ Տ. Մովսէսեան էֆ.
կարծիք յայտնեց թէ ազգային բռնաբար-
ուած իրաւունքի մը ձեւով ներկայացուած
այս խնդիրը կարծուածին պէս չէ, եւ թէ
Հայ Եկեղեցւոյ ընտրական կարգը խան-
գարուած չէ: Մ. Կիւրճեան էֆ. չեչաեց թէ
ընտրութիւնը պիտի կատարուի ուսական
հողի վրայ, եւ փոքր չեղում մը ընել կա-
րելի չէ: Հուսկ ուրեմն ժողովը ընդունեց
Ար. Դաստարեան էֆ.ի առաջարկը, որով
կ'որոշուի հին ձեւը պահելով նոյն պայ-
մաններով կատարել ընտրութիւնը:

Ազգ. ժողովոյ նոյն նիստին, ատենա-
կան գործողութեանց միջոցին, Վառաման
էֆ. զրաւորապէս ներկայացուց իր աւ-
բաստանութիւնը, որով կը նկատէր Օր-
մանեան Ս.ը իբր Ռուսահայոց կեղք. Ժո-
ղովին փակման պատճառ, հիմնուելով
դաշնակցութեան դատին համար Լըժինի
պատրաստած ամբաստանազրին վրայ: Եր-
կարապատում կարծիքներու փոխանակու-
թենէ մը ետքը, թէ այս առաջարկը հին
յանձնաժողովին պէտք է զրկել, նո՛ր յանձ-
նաժողով մը պէտք է կազմել, թէ Ատենա-
պետաց Դիւանին պէտք է յանձնել, հուսկ

ուրեմն 29ի դէմ 30 ձայնով որոշուեցաւ Ատենապետաց դիւանին յանձնել:

ՀԱՍԱՆ ՊԵՅԼԻԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԻՏԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԻ. — Խառն ժողովի Դչ.ի նիստին մէջ ի նկատ առնուած է Ատանայի առաջնորդարանէն եկած գիր մը, որուն մէջ կ'ըսուի թէ նորրինտիւր կուսակալը, եղած դիմումներուն վրայ, որոշած է արտօնել Հասան Պէյլիի քանդուած եկեղեցիին վերաշինութիւնը, քանդուած վայրէն 20 մեղրի չափ վար: Առաջնորդարանը կը գովէ կուսակալ պէյին բռնած ուղիղ ընթացքը, Խառն ժողովը այդ շինութիւնը փութացնելու համար դիմում պիտի ընէ Ներքին Դործոց Նախարարութեան:

ԿԱՐԳԱԹՈՂ ՎԱՐԴԱՊԵՏԸ. — Երուսաղէմէն Պոլիս բերուած երեք վարդապետներէն Ռոստոզոցի Սարգիս Վ. քանի մը անգամներ եկեղեց. կարգը ձգելու ապառնալիքէն հոքը, այս անգամ Շ. Գաւաթար երթալու համար Սամսոն եղնելով, այն տեղէն անուանարկութեամբ լինապակ մը զրկեր է Պատրիարքարան, որով կը յայտնէ թէ եկեղեցականութիւնը թողած եւ մեկնած է Ռումանիա, որիկ պիտի գայ Պոլիս եւ պէտք եղած դասը պիտի տայ Ազգ. իշխանութեան գլուխը Կանուորդներուն: Տեղապահ Ս.ը Խառն ժողովոյ նկատառութեան յանձնեց այս գիրը:

ՄՈՍԿՈՒՍԻ մէջ վերջիւս մնած է Սարգիս Զանուսեան, որ 80,000 ռբլ. կը թողու էջմիածնի Գէորգեան ձեմարանին, 25000 ռբլ. Ասպրաքան քաղաքի բարեգործական հաստատութեան, եւ 5000 ռբլ. Գաւաթարեան անկեղանոցին:

ՀԱՅ ՀՌՈՄԷԱԿԱՆՍԻ Թէրզեան Պատրիարքը, որ ամբողջ հասարակութիւնը իրեն դէմ հանեց, համոզում գոյացնելով որ չի կրնար այլեւս իր պաշտօնը շարունակել, Սպանիայէն՝ ուր «Հայաստանի Պատրիարք» տիտղոսն իւրացնելով դրամ կը հանգանակէ, հրաժարականը զրկեր է տեղապահ ձեմեան գերապայծառին: Թէրզեանի միակ խելացի գործը կը նկատուի այս, որով Հայ-Հռոմէական հաստակութիւնը լայն շուռչ մը կ'առնէ:

ԱՀԱԽՈՐ ՀՐԴԵՀՆԵՐՈՒ ՇԱՐԲ ԱԸ Զիր. եւ Բչ. օրերը աւերակներու կոյտ մը դարձուց մայրաքաղաքիս Պոլսոյ կողմի շրջանակին ընդարձակ մէկ մասը, լափիլիզելով հաղարաւոր շէնքեր, սկսելով Ուղուն չարչըն, եւ տարածուելով Թանթաղալէ, Սիւլէյմանիէ, եւ Սպարապետութեան պաշտօնատան հսկի կողմէն անցնելով Վէրնէճիլէր, Տիրէքլէր Արասի, Ագսէրայ, Լալէլի, Լանկա եւ հասնելով մինչեւ Եէնի-գարուի կայսրանը եւ միւս կողմէ Տաուտ Փաշա Բչ. օրը Պալատի կողմը ուրիշ հրդեհ մը մոխրի վերածեց իր 1500 տուներ: Օրթթերթերը սրտայոյզ մանրամասնութիւններ հրաաարակեցին այս ահաւոր աղէտին վերայ, որ սուգի օր մը դարձուց Յուլիս 10ը, աղատութեան տարեդարձի օրը: Անպատասպար միացին մօտ հարիւր հազար անձեր, չքաւոր մարդիկ ամէն ազգէ: Լանկայի եւ Եէնի գափուի կողմերը հարիւրաւոր հայաբնակ տուններ բոցերու ճարակ եղան, որոսածիլիկ թշուառութեան մատնելով հարիւրաւոր աղքատիկ ընտանիքներ: Ասոնցմէ ամենէն խեղճերը առժամաբար պատասպարուեցան Մայր-Եկեղեցւոյ յարակից տաճարին մէջ: Ընդհանուրին կարծեօք՝ չարամտութեան վերադրուած (քա.ի որ բաղմաթիւ հրձիգներ ձերբակալուած են) այս աղէտին առթած թշուառութիւնը թեթեւեղելու համար միջազգային յանձնաժողով մը կազմուած է արդէն, եւ Վեհ. կայսրէն սկսեալ, նախարարներ, զրամական հաստատութիւններ եւն, կարեւոր գումարներ նուիրած են: Եւ սակայն անհրաժեշտ պէտք կայ որ ազգն ալ իր պարտականութեան բաժինն ստանձնէ, չքաւորութեան մատնուած հարիւրաւոր ընտանիքներու օգնութեան փութալով: Վստահ ենք սր այս տողերն հրատարակուած միջոցին արդէն իսկ կարեւոր ձեռնարկներն եղած պիտի ըլլան, հրկիզեալներու անմիջական պէտքերուն գոհացում տրուելու համար, միւս կողմէ աշխատուելով հանդերձ անոնց թշուառութեան տեւական ամոքում մը պատրաստելու:

Արտօնատէր ՀՄԱՅԵԱԿ ՔԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐԲԱՅՐ ՔԶՆՅ. ԿԵԶԻԻԲԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ
(ԵԹՕՆԱՄԵԱՅ ԻՏԱՑԻ)

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ, ՍԿԻՒՏԱՐ

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՎԱԽԵՐԱՑՈՒԱԾ ՄԵԱՐԻՖԵՆ

Հաստատութիւններս, որոնց արդիւնքները գնահատուեցան մեծագէտ, եւ որոնց վկայականները վաւերացուեցան օրն օրին կըթական նախարարութիւնէն, ամէնէն մեծ երաշխիքն են թէ իրենց նպատակին կը ծառայեն լիովին, թէ կը սորվեցնեն թաց ի Հայերէնէ, Օսմաներէնէ Պրանսերէն Անգլիերէն եւ Դերմաներէն լեզուները, եւ զիտական եւ իմաստասիրական ուսումները տալով հայկական ընտիր դաստիարակութիւն մը երկսեռ Հայ պատանիներու, պատրաստելով զանոնք ամէն առարկէ զի եւ համալսարանական ուսման, ձեռամբ 30է աւելի փորձ, հմուտ եւ մասնագէտ ուսուցիչներու:

Ի մօտոյ պիտի շացուի համալսարանական դասարան մը, մանկավարժական, զիտական, առեւտրական եւ լեզուական հիւղերու: Քսան թիւը բաւական պիտի սեպուի բանալս համար առաջին դասարանը: Վերաբացումը 1 Սեպտ. Եւ դասերը պիտի սկսին 5 սեպտեմբեր, Բշ:

Աշակերտաց ընդունելութեան համար զիմել ամէն ուրբաթ, ուղղակի Տնօրէնութեան, աղջկանց վարժարանը առաւօտէն մինչեւ իրիկուն, ու Գշ. եւ Եշ. օրերը ժամը (Ը. Թ.) 10էն վերջ Սիւմպիւլի խան, Հիմնագիր-Տնօրէնին դասագիրքերուն եւ բառարաններուն կեդրոնատեղին:

Հիմնադիր-Տնօրէն

ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

5—1

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵՍԵՐՈՂ ՆՈՒՊԱՐԵԱՆ
ԱՌՁՆՈՒՆ ԲԱՌԱՐԱՆ

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅ-ԱՇԽԱՐՀԻԿ

Կը պարունակէ 1. ճոխ բառագումար մը ֆրանս. լեզուի, նշանակութիւնները ի հարկին ֆրանս. օրինակներով բացատրուած. 2. Արհեստական, գիտական եւ գրական հազարաւոր նորաբանութիւններ. 3. Նոր փոխառութիւններ եւ պատշաճեցումներ հայկազեան բառագիրքէ. 4. Բառագիրք մը ֆրանսերէնի մէջ գործածուած լատին, յոյն եւ օտարաբարբառ ասութիւններու: 5. Պրանսահայ ճոխ բառացուցակ մը պատմական, աշխարհադրական եւ դիցաբանական անուններու:

Յարգ հրատարակուած նմանօրինակ բառագրոյ վրայ իրական առաւելութիւններով օժտուած է սոյն բառգիրքը՝ պատուարեր թէ՛ հեղինակին եւ թէ՛ հրատարակիչներուն (Պալենց եւ Պաղտատեան գրատունները):

Գին՝ քաղցօմէ կաղմ 25 դրշ., լաթակաղմ 27, կիսակաշի 30, կաշեկաղմ 35 դրուշ:

ՄՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՄԵՐ ԲՈՂՈՔՆԵՐԷ ՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՔԻԸ ՍԵՈՆՑ ՀԱՆԴԷՊ. — Դրեց Յաքոբ Վարդիբեկեան: — Եզրէն Թորթլանտի սպանիին հարնոյ բանտէն Պոտլանի Ազգ. Երազրին ուղղուած գրութիւնը, այժմ հատուկ վերածուած նորին թերթին կողմէ: Տխուր յայտնութիւններուն դաշնակցական դրժիւքներու գործելակերպին հէմ, զոր չի վախճիր «հայաբանդ» կոչել: Յուզումով եւ սարսուռով կարդացուելիք գիրք մը Դին 30 սէնթ:

ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Տպագր. Ց. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Սուրբան-Համամ Մօրա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ